



ՍՈՒՐԻԿ ԽԱԶԱՏՅԱՆ  
ՀՀ Սյունիքի մարզպետ

# «Տարվա մարզպետը»՝ 2012 թ.-ի ձեռքբերումների և 2013թ. հեռանկարների մասին



Արդյունաբերական, շարժիչային որակյալ յուղեր՝ Եվրոպայի առաջատար արտադրողներից:  
«Նակօյլ» ՍՊԸ, ք. Երևան, Մերակյան փ. 141/1, հեռ.՝ 771190, ֆաք.՝ 771192, URL: www.nakoil.am

**Երազանք պահելը, կարծում եմ, բնորոշ է մանկությանը,  
դրանք իհմա վերածվել են նպատակների: Իսկ նպատակս ու  
ցանկությունս է, որ մեր երկրում մշտապես խաղաղություն լինի,  
մեր ժողովուրդն ապրի արժանավայել կյանքով՝ լծված  
ստեղծագործ ու արգասաբեր աշխատանքի:**



-Պարո՞ն Խաչատրյան, քանի որ հանդիպում ենք ամանորյա տոներից հետո, հետաքրքիր է, ինչպես անցկացրեցիք Ամանորը, ի՞նչ երազանք պահեցիք Ամանորի գիշերը:

-Ամանորը դիմավորել եմ տանը, իմ օջախում՝ ընտանիքին անդամների, հարազատների, բարեկամների և աշխատանքային ընկերների հետ հայկական ավանդական տոնական սեղանի շուրջ:

Երազանք պահելը, կարծում եմ, բնորոշ է մանկությանը, դրանք իհմա վերածվել են նպատակների: Իսկ նպատակս ու ցանկությունս է, որ մեր երկրում մշտապես խաղաղություն լինի, մեր ժողովուրդն ապրի արժանավայել կյանքով՝ լծված ստեղծագործ ու արգասաբեր աշխատանքի:

-«Դե ֆակտո» ամսագիրը Զեզ ճանաչել է «Տարվա մարզպետ», ինչի առքիվ շնորհավորում ենք Զեզ: Դուք ինքներդ ինչպես կգնահատեք 2012թ. Զեր աշխատանքը:

-Շնորհակալություն եմ հայտնում ձեր ընտրության համար: Ին աշխատանքի նման գնահատականը առավելապես պայմանավորված է այն հանգանաքով, որ մեզ հաջողվել է համատեղ ու արդյունավետ գործակցություն պահպել ինչպես կենտրոնական իշխանությունների, այնպես էլ մարզի տեղական ինքնակառավարման մարմնների, մարզում գործող հանրապետական գործադիր մարմնների տարածքային ծառայությունների հետ:

Կարծում եմ տեսանելի են ի նպաստ սյունեցիների բարեկեցությանն ու մարզի զարգացմանն ուղղված մեր ջանքերի արդյունքները:

-Ինչպիսի՞ տարի էր 2012թ. Սյունիքի մարզի համար, ինչ ծրագրեր հաջողվեց իրականացնել:

-2012 թվականը, որքան էլ տարբեր գործուներով պայմանավորված դժվար, բայց մարզի համար ևս մեկ հաջողված տարի էր: 2012-ին մեզ հաջողվել է լուծել:



մեր առջև ծառացած մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրներ պետական և համայնքային շահերի ներդաշնակման, հանրապետական գործադիր մարմնների ու նրանց տարածքային ծառայությունների հետ համագործակցության ու գործողությունների փոխհամաձայնության հենքի վրա՝ պահպենով ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացումը:

Հայաստանի Հանրապետության նախագահի և կառավարության անմիջական աջակցության շնորհիկ՝ մեզ հաջողվել է դրական դիմանմիկա պահպենով լուսատության մի շարք ճյուղերում (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, քաղաքաշինություն, գրոսաշրջություն):

2012թ. մարզում իրականացված ներդրումների ծավալները դեռևս ճշգրտման փուլում են, սակայն այսօրվա նախնական տվյալներով՝ դրանք կազմել են ավելի քան 18.7 մլրդ դրամ, որից ՀՀ պետական բյուջեի ներդրումների ծավալը՝ 3.9 մլրդ դրամ, ՀՀ պետական բյուջեի վարկային միջոցների ծավալը՝ 0.5 մլրդ դրամ, միջազգային կազմակերպությունների և դոնորների ներդրումների ծավալը՝ 4.8 մլրդ դրամ, մասնավոր ներդրումների ծավալը՝ 9.5 մլրդ դրամ: Ներդրումներն ուղղվել են մարզի տնտեսության մի շարք ճյուղերի՝ փոքր ու միջին ծեռարկատիրության և մասնավոր հատվածի, կրթության և առողջապահության, գյուղատնտեսության և բնապահպանության, արդյունաբերության, գրոսաշրջության, քաղաքաշինության և համայնքային ենթակառուցվածքների զարգացմանն ու սոցիալական ոլորտի հիմնախնդիրների լուծմանը:

-Այսուհետ մարզը հարուստ է օգտակար հանածոներով և, կարելի է ասել, արդյունաբերական մարզ է: 2012թ. ինչպիսի՞ տարի էր արդյունաբերության զարգացման առումով:

-Այո, ներկայումս Սյունիքն աչքի է ընկնում արդյունաբերության բարձր տեսակարար կշռով, և մարզի սո-

## Մարզում ունենք բավարար չափով օգտակար հանածոներ, բնական ռեսուրսներ, որոնք պետք է օգտագործել ի նպաստ մեր պետության զարգացմանն ու հզորացմանը՝ բարեկեցության կայուն աճ ապահովելով մեր համաքաղաքացիների համար:



ցիալ-տնտեսական զարգացման գերակա ուղղությունը հանդիսանում է լեռնահանքային արդյունաբերությունը, որն առկա հումքային, տեխնոլոգիական, կադրային ներուժի ու իրացման կայուն շուկայի առկայության պայմաններում մարզի տնտեսության մեջ տևական ժամանակ դեռևս կապահպանի իր առաջնային դերը: 2012թ. նախնական տվյալներով՝ մարզում ընթացիկ գներով արտադրվել է շուրջ 196.0 մլրդ դրամի արդյունաբերական արտադրանք, աճը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ՝ կազմում է շուրջ 10.5%: Արդյունաբերական արտադրանքի ծավալում գերակշիր մաս է կազմում հանքագործական արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ նախնական տվյալներով շուրջ 167.0 մլրդ դրամ կամ 85.4%:

Մարզում ունենք բավարար չափով օգտակար հանածոներ, բնական ռեսուրսներ, որոնք պետք է օգտագործել ի նպաստ մեր պետության զարգացմանն ու հզորացմանը՝ բարեկեցության կայուն աճ ապահովելով մեր համաքաղաքացիների համար:

**-Ի՞նչպիսի՞ փոփոխություններ են արձանագրվել մարզի տնտեսական, կրթամշակութային և այլ ոլորտներում:**

-Մարզային և համայնքային իշխանությունների արդյունավետ գործունեության արդյունքում մարզի տնտեսության մեջ տեղի են ունեցել զգալի դրական տեղաշարժեր:

Արդյունաբերությունը միակ ոլորտը չէ, որտեղ 2012թ. արձանագրվել է դրական տեղաշարժեր:

Դաջողություններ են արձանագրվել նաև գյուղատնտեսության ոլորտում: ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով ֆերմերային տնտեսություններին և համայնքներին հատկացվել է աշնանացան ցորենի 291տ էլիտա և 780տ առաջին վերարտադրության սերմնացու, շուկայականից էժան զներով ձեռք է բերվել 1300տ դիգվառելիք, 2400տ ազուրական պարարտանյութ:

Մարզպետարանը մշտապես համագործակցել է գյուղատնտեսական կազմակերպությունների և գյուղացիական տնտեսությունների հետ, օժանդակել նրանց բերքահավաքի, գարնանացանի, դաշտային աշխատանքների, սերմանյութերի ձեռքբերման, անասունների հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպման և այլ գյուղատնտեսական աշխատանքների գործընթացներում: Այս ամենը նպաստել է նրան, որ 2012թ կատարվել է 15400հա աշնանացան, 2011թ. 14127հա դիմաց, համապատասխանաբար՝ 2012թ. ստացվել է 30300տ ցորեն, 14500տ գարի 2011թ. 23300տ ցորենի և 9700տ գարու բերքի դիմաց, միջին բերքատվությունը կազմել է 22-24g:

Գյուղատնտեսական կուլտուրաների մշակման և բերքահավաքի առումով նույնական 2012-ը գերազանցել է 2011թվականի ցուցանիշերը՝ գրեթե բոլոր ճյուղերում:

Զգալի բարեփոխումներ են կատարվել նաև հանրակրության բնագավառում: 2012 թվականի ընթացքում մարզային ենթակայության 114 հանրակրութական ուսումնական հաստատություններում ավարտվել է լիցենզավորման գործընթացը:

Լուրջ հաջողություններ են համարում նաև այն, որ տարեցտարի ավելանում է մարզի աշակերտների ներգրավվածության աստիճանը օլիմպիադաներին, ասմունքի, երգի փառատոններին, սպորտային և ռազմամարզական մրցույթներին:

Մի շատ կարող դիտարկում, որը, կարծում եմ, բնորոշ է հայ ժողովրդին ընդիմարապես և սյունեցիներին՝ մասնավորապես: Խոսք սյունեցիների՝ կրթության նկատմամբ վերաբերմունքի մասին է:

Մարզում, նոյնիսկ արցախային պատերազմի ամենադժողակ ժամանակներում, կրթության հարգի պակաս երբեք չի զգացվել: Դրա պերճախոս վկայությունն է այն, որ 2011-2012թթ. ուսումնական տարում շրջանավարտներից 937-ը մասնակցել է պետական միաս-



## 2012 թվականի նոյեմբերին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ տեղի ունեցավ Մեղրիի հիդրոէլեկտրակայանի հիմնարկեքը, որը կառուցվում է սահմանային Արաքս գետի վրա:

Նական քննություններին, 925-ը՝ ընդունվել բոլի, և որ ոսկե մեղալակիրների բացարձակ թվով (ինը) մարզը առաջինն է հանրապետությունում:

Ուսուցիչների պատասխանատվության և նրանց սաների աշխատասիրության, ուսման նկատմամբ նրանց սիրո արդյունք է հանրապետական ստուգատեսներում մեր աշակերտների՝ տարիներ շարունակվող փայլուն ցուցանիշները: Այսպես, 2011-2012 ուստարում առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին մասնակցել է մարզի 90 աշակերտ, որից 28-ը արժանացել են դիալլումների, 19-ը՝ գովասանագրերի, ինչը որակական առումով մեծ թիվ է նման ստուգատեսի համար:

Մարզի մշակութային կյանքը վերջին տարիներին դարձել է առավել աշխույժ և բազմարովանդակ, ինչը որոշակիորեն բավարարել է բնակչության բոլոր խավերի և տարիքային խճերի հոգևոր-մշակութային պահանջմունքներն ու նախասիրությունները:

2012 թ. մարզի համայնքներում պատշաճ մակարդակով նշվել են ազգային, պետական, եկեղեցական և ժողովրդական տոները, հոբելյանները: Կազմակերպվել և անցկացվել են բազմարույթ մշակութային և սպորտային միջոցառումներ, փառատոններ, ցուցահանդեսներ, մեծարման երեկոներ, գիտաժողովներ, ներկայացումներ, համերգային ծրագրեր, ուստագնացություններ, երիտասարդական հավաքներ, սպորտային մրցումներ և խաղեր:

Անցկացված միջոցառումներից կառանձնացնելի ՀՀ անկախության 21-րդ, Հայոց բանակի ստեղծման 20-րդ, Հայունական մեծ պատերազմում հաղթանակի, Շուշիի ազատագրման տարեդարձներին նվիրված միջոցառումները, Հայ գրատպության 500, Սայաթ-Նովայի 300, Եղիշե Զարենցի 115-ամյակներին նվիրված միջոցառումները, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոները՝ Սուրբ Սարգիս, Տյառն ընդառաջ, Ծաղկազարդ, Սուրբ Զատիկ և այլն: Կազմակերպվել են բազմաթիվ հիշատակի, մեծարման երեկոներ, նվիրված արցախյան ազատամարտի նահատակներին, ինչպես նաև բազմարույթ երիտասարդական փառատոններ ու մարզամշակութային միջոցառումներ:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացման, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի ծնավորման ու ամրապնդման նախատակով 2012թ. մարզում անց են կացվել բազմաթիվ սպորտային միջոցառումներ:

Ամերաժեշտ աշխատանքներ են տարվել պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման, հողատկացման, պահպանական գոտիների նախագծերի կազմման ուղղությամբ:

-Վերջին տարիներին Սյունիքի մարզում ակտիվորեն իրականացվում են քաղաքաշինական աշխա-



**Մարզներ, ինչպիսի՞ն էր պատկերը 2012թ.:**

-2012թ-ին մարզում իրականացվել են շուրջ 7.2 մլրդ. դրամի համաշխարհարական աշխատանքներ, որից՝ 1.3 մլրդ դրամի կապիտալ շինարարության և 5.9 մլրդ. դրամի հիմնանորոգման ու վերանորոգման աշխատանքներ:

2012 թվականին շարունակվեցին լուծում ստանալ մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված հիմնախնդիրները: Դրանց մի մասի իրականացման նախատակով ՀՀ կառավարության որոշումներով Սյունիքի մարզին հատկացվել է շուրջ 1.4 մլրդ դրամ, որը նախատակարտողվել է քաղաքային համայնքների ճանապարհային ցանցի ասֆալտապատմանը, վերանորոգմանը, ինպես նաև դպրոցների, նախակրթարանների հիմնանորոգմանը, մատադ սերնդի դաստիարակության պայմանների բարելավմանը, մշակութային կառույցների, բնակչունի հիմնանորոգման, պահպանման և խմելու ջրի ցանցի կառուցման աշխատանքներին:

Վերօդրյալ ներդրումներով իրականացվել են ավելի քան 50 ծրագրեր: Մասնավորապես, սկսվել են Դարբաս համայնքի Շամբ բնակավայրի դպրոցի կառուցման աշխատանքները, վերանորոգվել է 10 դպրոց, 2



մանկապարտեզ, 2 քոլեջ, հիմնանորոգվել է Կապան քաղաքի մոտ 4.9 հազար քմ մակերեսով 8 բազմաբնակարան շենքերի հարթ և լանջավոր տանիքներ: Ընդհանուր առնամբ, ասֆալտապատվել են 8,3 կմ երկարությամբ 42,57 հազ. ք.մ համայնքային ճանապարհներ և իրականացվել մի շարք այլ աշխատանքներ:

2012 թվականի նոյեմբերին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ տեղի ունեցավ Մեղրիի հիդրոէլեկտրակայանի հիմնարկեքը, որը կառուցվում է սահմանային Արաքս գետի վրա: ՀԵԿ-ի շինարարության ընթացքում ներգրավված են լինելու շուրջ 2 հազար մասնագետներ և բանվորներ: ՀԵԿ-ի հաշվարկային հզորությունը 130 մգվտ է, որի կառուցման և շահագործման աշխատանքներում կներգրավվի տեղական աշխատումը:

2012 թվականի դեկտեմբերին շահագործման հանձնվեց Հայաստանի և Շվեյցարիայի կառավարությունների համաֆինանսավորումով իրականացվող «Սոցիալական տուն աջակից պայմաններով» ծրագրի շրջանակներում կառուցված բազմաթափառ շենքը: Նոր շահագործված բնակելի տունը եռահարկ է, ունի 20 բնակարան, որի շահառուներն են ամենակարիքավոր և ամենախոցելի՝ տոցիալապես անապահով, վագոն-տնակներում բնակվող, հաշմանդամ ունեցող և փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքները:

-Ի՞նչ խնդիրներ են առկա մարզում, որոնց լուծումն առաջնահերթ եք համարում:

-2013 թվականին, ինչպես և նախորդ տարիներին, խնդիրների ամբողջական փաթեթից առանձնացրել ենք առաջնահերթ լուծում պահանջողները, համալիր ուսումնասիրության և վերլուծության ենթարկելով կազմել տարեկան աշխատանքային պլանը:

Որպես առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներ ըստ ոլորտների՝ 2013թ առանձնացվել են.

- Կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունավետության բարձրացումը, դպրոցական շենքների հիմնանորոգումը և հիմնովին կառուցումը,

- առողջապահական ծառայությունների որակի բարձրացումը, բուժհաստատությունների տեխնիկական վերագինումը, պետական նպատակային ծրագրերի իրականացումը,

- գյուղատնեսության ոլորտի զարգացման ծրագրերի օժանդակումը,

- մարզի տեղական ինքնակառավարման համակարգի լիարժեք ձևավորումը և կայացումը,

- համայնքային բյուջեների կատարման միջոցառումների արդյունավետության բարձրացումը,

- ենթակառուցվածքների զարգացման (գազիֆիկացման, ճանապարհաշինության, խնելու և ոռոգման ջրի մատակարարման, տրանսպորտային կապի բարելավման, համայնքների բարեկարգման և այլն) օժանդակումը,

- փոքր և միջին ձեռնարկությունների համար նպաստավոր պայմանների ստեղծումը,

- միջազգային և դրոնոր կազմակերպությունների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը և նրանց կողմից նպատակային ծրագրերին աջակցումը:

**-Մարզում զարգացման ինչպիսի հեռանկարներ եք տեսնում:**

-Վերջին շրջանում երկրի տնտեսության դիվերսիֆիկացման՝ բազմազանեցման, խնդիրները գտնվում են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում և այս գործընթացներից անմասն չի մնում նաև Սյունիքը:

Այս առումով ցանկանում եմ կարևորել ՀՀ Սյունիքի մարզպետարանի և Սյունիքում ԵԱՀԿ ծրագրերի իրականացման գրասենյակի հետ համատեղ նախաձեռ-

**Անհրաժեշտ եմ համարում նշել, որ 2012 թվականին մարզում  
ստեղծվել են 539 նոր աշխատատեղեր, որոնցից 195-ը 29 նոր ստեղծված  
ձեռնարկություններում:**



Նաժ ՀՀ Սյունիքի մարզի տնտեսության դիվերսիֆիկացիայի ծրագրի կազմումը: Ծրագրի նպատակն է բացահայտել մարզի տնտեսության այն ճյուղերի զարգացման պոտենցիալը, որոնք թույլ են զարգացած կամ ընդհանրապես զարգացած չեն և ներդրողներին ուղղորդել նշված ոլորտներում իրականացնելու իրենց ծրագրերը:

Մարզի տնտեսության զարգացմանը նեծապես կնապաստի նաև արդեն մեկնարկած «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը», որը խոշոր ենթակառուցվածքային ծրագիր է, և որի նպատակն է միջազգային բարձր ստանդարտներին բավարարող տրանսպորտային ուղիներով երկրի հարավը կապել հյուսիսի հետ? ապահովելով ելքը դեպի միջազգային շուկաներ: Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի վերակառուցումը և զարգացումը հնարավորություն կտա դյուրացնել և աշխուժացնել մարզի բնակչության ներքին շարժը, տնտեսության հիմնական ոլորտների զարգացումը և արտահանման ընդլայնումը (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, շինարարություն, գրոսաշրջություն) և վերջին հաշվով էապես նպաստել նաև այնպիսի հիմնախնդրի լուծմանը, ինչպիսին է զբաղվածության խնդիրը:

-ինչպիսի՞ կյանքով է ապրում Սյունիքի մարզի քաղաքային և գյուղական համայնքների բնակչությունը, ինչպիսի՞ փոփոխություններ են արձանագրվել նրանց կյանքում:

-կապված մարզի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների աստիճանական ու հետևողական լուծման հետ՝ մարզի համայնքներում մարդկանց կենսանակարդակի աստիճանաբար բարձրացման միտումներ են դրսենում:

Իհարկե, յուրաքանչյուր համայնքում առկա է բնակչության որոշակի հատկածի՝ արտատությունը հաղթահարելու խնդիրը: Սակայն օրեցօր աճող ներդրումները բերում են աղքատության կրծատմանը և

մարդկանց կենսապայմանների բարելավմանը, առկա սոցիալական խնդիրների լուծմանը: Մարզում չկա որևէ համայնք, որտեղ վերջին 8-9 տարիների ընթացքում ֆինանսական տարրեր աղբյուրների միջոցով ներդրումներ կատարված չլինեն: Պետական բյուջեից, միջազգային և այլ կազմակերպությունների կողմից իրականացված ներդրումների գգալի մասը հիմնականում ունեցել է տնտեսության զարգացմանը նպաստող ուղղվածություն: Բացի այդ, քաղաքային և գյուղական համայնքների ենթակառուցվածքների մասով կատարված մեծածավալ աշխատանքները (ճանապարհների, փողոցների ու հրապարակների բարեկարգություն, խնելու, ոռոգման ջրատարների, գազատարների կառուցում, կրթական ու մշակութային հաստատությունների վերանորոգում և այլն) նպաստել են որոշակիորեն կյանքի որակի բարձրացմանն այդ համայնքներում:

Այս հարցում իր լուրջ դերակատարությունն ունի «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը: Բավական է նշել, որ կոմինատի կողմից, դեկավարության բարի կամքի դրսուրման արդյունքում, միայն 2012 թվականին մարզի բոլոր համայնքներում կատարվել է ավելի քան 2.9 մլրդ դրամի ներդրում:

Լավագույն օրինակներից կարող է հանդիսանալ Տաթև, Տանձատափ, Սվարանց, Ջալիձոր, Շինուհայր և հարակից գյուղերում գրոսաշրջության զարգացումը, կապված Տաթևի ծովանուղու կառուցման հետ, ինչպես նաև Շամբ գյուղում հանքային ջրերի ու պահածոների գործարանների հիմնումը, դրանով պայմանավորված նոր աշխատատեղերի ստեղծումը, որն էլ իր լուրջ ազդեցությունն է ունենում կյանքի որակի բարելավման վրա:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ 2012 թվականին մարզում ստեղծվել են 539 նոր աշխատատեղեր, որոնցից 195-ը 29 նոր ստեղծված ձեռնարկություններում: Սա հենց համայնքներում կյանքի դեպի լավը, դեպի նորը փոխվելու լավագույն ապացույցներից է:

Կարծում եմ հանրային կյանքում դրական փոփո-




խությունները հանգեցրել են նաև նրան, որ այսօր մարդկանց մեջ ամրացել է հավատը վաղվա օրվա և երկրի ապագայի նկատմամբ:

-Որո՞նք են 2013 թ. առաջնահերթությունները, ինչ կարևոր ծրագրեր պետք է իրականացնել:

-2009թ. հունիսի 26-ին ՀՀ կառավարության՝ Սյունիքի մարզում կայացած արտագնա նիստում N 782-Ն որոշմամբ՝ հաստատվեց ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որի կազմնան ընթացքում հաշվի են առնվել տարբեր սոցիալական խմբերի, գործարարների, հասարակական և այլ կազմակերպությունների առաջարկություններն ու դիտողությունները: Ծրագիրը հաջողությամբ իրականացվել է: Ծրագրով 2010թ. նախատեսված 21.6 մլրդ դրամ ներդրումների դիմաց փաստացի կատարումը կազմել է ավելի քան 29.8 մլրդ դրամ, 2011թ. նախատեսված 12.9 մլրդ-ի դիմաց՝ փաստացի կատարումը 16.8 մլրդ դրամ: 2012թ. ծրագրով նախատեսվել էր իրականացնել 23.1 մլրդ դրամի ներդրումներ: Ծրագրի մոնիթորինգի և գնահատման տարեկան հաշվետվությունը գտնվում է ամփոփման փուլում և կիրապարակվի 2013 թվականի հունվարին: Նախնական հաշվարկներով՝ ծրագրի կատարումը անբողջությամբ ապահովվել է:

Այժմ Սյունիքի մարզպետարանում կազմվում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2013 թվականի աշխատանքային պլանը, որի իրականացման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է շուրջ 21.0 մլրդ դրամ: ՀՀ տարածքային կառավարման նախարարի հաստատումից հետո այն կիանդիսանա մարզի տնտեսության 2013 թվականի զարգացման հիմնական ուղղմանիցը:

Արդյունաբերության, քաղաքաշինության, ենթակառուցվածքների զարգացման ոլորտների վերաբերյալ առկա և իրականացվող ծրագրերի մասին վերն արդեն իսկ նշել եմ. կցանկանայի առանձնացնել մարզում իրականացվող բնապահպանական ծրագրերից հատկապես մեկը: ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից, 2012 թվականին Գեր-



մանական զարգացման բամկի /KFW/ ֆինանսավորմամբ, իրականացվել են Շիկահողի կենսոլորտային արգելոց և շրջակա հանայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի պիլոտային փուլը: Ծրագրի ընդհանուր ծավալը 8.25 մլն եվրո է, որը կուղղվի Շիկահողի կենսոլորտային արգելոցի ստեղծմանը և Կապան, Շիկահող, Ծավ, Մրաշեն, ճակատեն, և Հանդ հանայնքների զարգացմանը: Ծրագիրը կմեկնարկի այս տարի:

Կարծում եմ՝ դրան համահունչ Սյունիքում կշարունակվի զարգանալ ավանդական դարձած ճյուղերը՝ լեռնահանքային արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, միաժամանակ կզարգանա էներգետիկայի ոլորտը՝ հատկապես փոքր ՀԵԿ-երի կառուցման և շահագործման ուղղությամբ, կշրունակվի համայնքների զարգիքի կացումը, մեծ թափ կստանա գրուաշրջության զարգացումը, որը կապված է մարզի ուշագրավ պատմամշակութային և գեղատեսիլ բնության հետ, կշարունակվի զարգանալ փոքր և միջին բիզնեսը, որի խթանումը մշտապես գտնվում է մեր ուշադրության կենտրոնում:

### **Հարցազրույցը՝ Սուսաննա Թամազյանի**